

## Աննա Հովհաննիսյան

*ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական  
համագործակցության վարչության պետի տեղակալ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՅԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ<sup>1</sup>

### Համառոտագիր

Համաշխարհային մակարդակով իրականացվող միգրացիոն և ինտեգրացիոն գործընթացներն անխուսափելիորեն վեր են հանում այդ ոլորտում առկա որոշակի խնդիրներ, որոնց լուծման հարցում կարևորվում է պետությունների միասնական մոտեցումը և համընդհանուր չափանիշների կիրառումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով նախատեսվում է միջազգային իրավական պաշտպանության տրամադրումը և համապատասխան երաշխիքների կիրառումը դրա կարիքն ունեցող անձանց շրջանակի նկատմամբ:

Սակայն գործնական իրավիճակի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մի շարք դեպքերում օրենքով նախատեսված կարգով անազատության մեջ հայտնված անձանց կողմից ՀՀ-ում միջազգային պաշտպանություն հայցելու իրավունքից օգտվելը դիտվում է որպես իրենց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված որոշակի սահմանափակումներից խուսափելու միջոց:

Սույն հետազոտության նպատակը ՀՀ-ում միջազգային պաշտպանություն հայցելու ընթացակարգերի կիրառման, համապատասխան իրավունքների երաշխավորման գործիքակազմի և մեխանիզմների, կատարված բարեփոխումների հետազոտումն է:

Իրականացված հետազոտության հիման վրա հողվածում ներկայացված են մինչև համապատասխան օրենսդրական բարեփոխումները առկա վիճակը և այդ բարեփոխումների իրականացման անհրաժեշտությունը, դրանց էությունը և առկա որոշ խնդիրների կապակցությամբ առաջարկներ:

**Հիմնաբառեր-** միջազգային պաշտպանություն, փախստական, ապաստան, հանձնում, էքստրադիցիա, միջազգային համագործակցություն, ապօրինի սահմանահատում:

<sup>1</sup> Հոդվածը ներկայացվել է 09.09.2023թ., գրախոսվել է 30.11.2023թ.:

## Ներածություն

**Թեմայի արդիականությունը.** Հայաստանի Հանրապետության (ստորև՝ ՀՀ) Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով նախատեսվում է միջազգային իրավական պաշտպանության<sup>2</sup> տրամադրումը և համապատասխան երաշխիքների կիրառումը դրա կարիքն ունեցող անձանց շրջանակի նկատմամբ:

Համաշխարհային մակարդակով իրականացվող միգրացիոն և ինտեգրացիոն գործընթացներն անխուսափելիորեն վեր են հանում այդ ոլորտում առկա որոշակի խնդիրներ, որոնց լուծման հարցում կարևորվում է պետությունների միասնական մոտեցումը և համընդհանուր չափանիշների կիրառումը:

1946 թվականին Միավորված Ազգերի Կազմակերպության (ստորև՝ ՄԱԿ) շրջանակներում ստեղծվել է Փախստականների միջազգային կազմակերպությունը<sup>3</sup>, որի հիմնական նպատակն էր փախստականների ու ներքին տեղահանվածների ռեպատրիացիան ու վերաբնակեցումը, և այս ուղղությամբ ակտիվորեն իրականացնում էր օպերատիվ միջոցառումներ, իսկ 1949 թ. դեկտեմբերի 3-ին ՄԱԿ Գերագույն վեհաժողովը №319 բանաձևով հիմնադրել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (այսուհետ՝ ՄԱԿ ՓԳՀ)<sup>4</sup>:

1951 թվականին հաստատվել է «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիան (ստորև՝ Կոնվենցիա), իսկ 1967 թվականին՝ Կոնվենցիայի արձանագրությունը:

Այսպիսով, միջազգային հանրությունը հետևողականորեն քայլեր է ձեռնարկել զարգացնելու և կատարելագործելու միջազգային պաշտպանություն հայցելու և այն տրամադրելու գործիքակազմը և երաշխիքները՝ նպատակ ունենալով ամրապնդել և ապահովել խոցելի վիճակում հայտնված անձանց հիմնարար իրավունքները:

Սակայն գործնական իրավիճակի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մի շարք դեպքերում օրենքով նախատեսված կարգով անազատության մեջ հայտնված անձանց կողմից ՀՀ-ում միջազգային պաշտպանություն հայցելու իրավունքից օգտվելը դիտվում է որպես իրենց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված որոշակի սահմանափակումներից խուսափելու միջոց:

Մասնավորապես, խոսքը վերաբերում է օտարերկրյա պետությունների կող-

<sup>2</sup> Սույն հոդվածում առանձնահատուկ չեն տարանջատվում միջազգային պաշտպանության առանձին տեսակները՝ փախստականի և ապաստանի կարգավիճակները՝ հաշվի առնելով, որ ներկայացվելիք հարցերը հավասարապես վերաբերում են նշված երկու կարգավիճակներին՝ հիմք ընդունելով հարցի վերաբերյալ միջազգային ընդհանուր մոտեցումները՝ առավել մանրամասն <https://www.refworld.org/docid/5bd313884.html>, կետ 3.1.3. (մուտք 26.08.2023թ.):

<sup>3</sup> <https://www.unhcr.org/publications/refugees-and-displaced-persons-resolution-3-october-1946-document-e-236> (մուտք 28.08.2023թ.):

<sup>4</sup> <https://www.unhcr.org/media/statute-office-united-nations-high-commissioner-refugees> (մուտք 28.08.2023թ.):

մից հետախուզման մեջ գտնվող և ՀՀ տարածքում ձերբակալված կամ կալանավորված, ինչպես նաև ՀՀ սահմանն ապօրինի հատած անձանց:

**Թեմայի նպատակը և խնդիրները.** Սույն հետազոտության նպատակը ՀՀ-ում միջազգային պաշտպանություն հայցելու ընթացակարգերի կիրառման, համապատասխան իրավունքների երաշխավորման գործիքակազմի և մեխանիզմների, կատարված բարեփոխումների հետազոտումն է:

Նշված նպատակին հասնելու հետազոտությունը բաժանվել է հետևյալ բաժինների.

Բաժին 1. Իրավիճակը մինչև 2021 թվականի օրենսդրական բարեփոխումները.

Գլուխ 1. ՀՀ սահմանն ապօրինի հատած անձանց նկատմամբ իրականացվող ընթացակարգերը,

Գլուխ 2. Օտարերկրյա պետության կողմից հետախուզվող անձանց նկատմամբ իրականացվող ընթացակարգերը:

Բաժին 2. 2021 թվականի օրենսդրական բարեփոխումները:

### **Բաժին 1. Իրավիճակը մինչև 2021 թվականի օրենսդրական բարեփոխումները.**

Սույն բաժնում ներկայացված հիմնական հարցերն անդրադառնում են ՀՀ-ում ապաստան կամ փախստականի կարգավիճակ հայցող անձանց և այդ կապակցությամբ ի հայտ եկած 2 հիմնական խնդիրներին:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի<sup>5</sup> (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապաստանը օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին ՀՀ-ում շնորհված պաշտպանությունն է, որը երաշխավորում է նրա նկատմամբ սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված սկզբունքի կիրառումը, ինչպես նաև ՀՀ-ում փախստական ճանաչված անձանց՝ Կոնվենցիայով, սույն օրենքով և ՀՀ այլ իրավական ակտերով շնորհված բոլոր իրավունքները:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ ապաստան հայցողն այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն է, որը ՀՀ-ում ապաստանի հայց է ներկայացրել, ինչպես նաև Կոնվենցիան ստորագրած որևէ պետության կողմից փախստական ճանաչված անձը, որը ՀՀ-ում ապաստանի հայց է ներկայացրել:

Ընդ որում, Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապաստանի տրամադրումը Հայաստանի Հանրապետությունում պետք է դիտվի որպես խաղաղ և մարդասիրական գործողություն:

<sup>5</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=154872> (մուտք 25.08.2023թ.):

**Գլուխ 1. ՀՀ սահմանն ապօրինի հատած անձանց նկատմամբ իրականացվող ընթացակարգերը:**

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի 04.11.1950թ. կոնվենցիայի<sup>6</sup> (ստորև՝ ՄԻԵԿ) 5-րդ հոդվածով ամրագրված է հիմնարար սկզբունքի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(...)

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:»:

Համանման դրույթ է ամրագրված նաև ՀՀ Սահմանադրությամբ, որի 27-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(...)

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:»

Այսպիսով, թե՛ միջազգային, թե՛ ներպետական օրենսդրությամբ ամրագրված է անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման օրինական հիմք այն դեպքերում, երբ վերջինս ապօրինի հատում է տվյալ պետության սահմանը:

Միաժամանակ, հաշվի առնելով հնարավոր տարատեսակ իրավիճակները, որոնց առաջացման հետևանքով հնարավոր է, որ անձի համար առկա լինեն սահմանված կարգով երկիր մուտք գործելու հնարավորությունը բացառող օբյեկտիվ պատճառներ, Կոնվենցիան նախատեսել է նաև այդ դեպքում անդամ պետությունների կողմից ձեռնարկվելիք քայլերը:

Մասնավորապես, Կոնվենցիայի 31-րդ հոդվածի համաձայն՝ ապաստան տված երկրում անօրինական կարգով գտնվող փախստականների նկատմամբ պայմանավորվող պետությունները պատժամիջոցներ չեն կիրառում իրենց երկիր ապօրինի մուտքի կամ ներկայության համար, եթե փախստականները ուղղակիորեն եկել են այն տարածքից, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգվում էր Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով, մուտք են գործել իրենց տարածք կամ գտնվում են այնտեղ առանց թույլատրության՝ պայմանով, որ նրանք անձամբ, առանց ձգձգման, ներկայանան իշխանություններին և մատնանշեն իրենց ապօրինի մուտքի կամ գտնվելու հիմնավոր պատճառ:

<sup>6</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870> (մուտք 27.08.2023թ.):

Հարկ է նկատել, որ ՀՀ օրենսդիրը ևս առաջնորդվել է այս մարդասիրական սկզբունքով և քրեական պատասխանատվությունից ազատող համարժեք դրույթ է նախատեսել ինչպես 2003թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ, այնպես էլ 2021թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 469-րդ հոդվածում:

Միաժամանակ, նշված երկու օրենսգրքերի համապատասխան հոդվածների խրախուսական նորմերի վերլուծությամբ ի հայտ են գալիս իրավական կարգավորման որոշակի փոփոխություններ, որոնք անմիջապես փոխկապակցված են միջազգային պաշտպանություն հայցելու ինստիտուտի կարգավորման առարկայի հետ:

Այսպես, 2003թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այդ հոդվածի գործողությունը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ վերապահված ապաստանի իրավունքից օգտվելու համար օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, առանց սահմանված փաստաթղթերի կամ առանց պատշաճ թույլտվության, մուտք է գործում Հայաստանի Հանրապետություն:

Այս կապակցությամբ խնդրահարույց էր այն իրավիճակը, երբ ՀՀ սահմանն ապօրինի հատած փախստականը չէր ցանկանում ՀՀ-ում ապաստան ստանալ, այլ ապօրինի մուտք էր գործել ՀՀ այլ երկիր տեղափոխվելու նպատակով, քանի որ նրա նկատմամբ խրախուսական նորմի կիրառելիությունը միանշանակ չէր՝ հաշվի առնելով նորմի բովանդակությունը և Կոնվենցիոն դրույթի հետ հնարավոր հակասությունը:

Բացի այդ, գործնականում ՀՀ տարածք ապօրինի մուտք գործած անձանց կողմից հետագայում փախստականի կարգավիճակ կամ ապաստան հայցելն ընկալվում էր որպես իրենց կողմից կատարված հանցագործության «արդարացում»:

Արդյունքում մի շարք դեպքերում ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելուց և այդ հանցավոր արարքը իրավապահների կողմից բացահայտվելուց տևական ժամանակ հետո այն կատարած անձինք դիմում են լիազոր պետական մարմնին՝ իրենց ՀՀ-ում փախստականի կարգավիճակ կամ ապաստան շնորհելու հայցով՝ այդպիսով նպատակ ունենալով խուսափել ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածով (2003թ. ընդունված) նախատեսված քրեական պատասխանատվությունից:

Այսպիսով, թեև վերը նկարագրված կոնվենցիոն նորմի կիրառման բուն էությունը հանդիսացել է հատկապես խոցելի խմբում հայտնված անձանց պաշտպանության և նրան նկատմամբ համապատասխան երաշխիքների ապահովման գործընթացը կարգավորելը, գործնականում այդ մեխանիզմի կիրառումը անձանց կողմից դիտարկվել է որպես քրեական պատասխանատվությունից խուսափելու հնարավոր միջոց:

Անդրադառնալով տվյալ հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների

Եվրոպական դատարանի (ստորև՝ ՄԻԵԴ) կողմից ձևավորված իրավական պրակտիկային՝ հարկ է նկատել, որ ՄԻԵԴ-ն իր մի շարք որոշումներով արձանագրել է, որ թեև չի քննում ապաստանի հարցերը կամ պետությունների կողմից 1951թ. Ժնևի կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարումը, սակայն անդրադառնում է նմանօրինակ հարցերին ՄԻԵԿ մի շարք հողվածներով նախատեսված պարտավորությունների կատարման համատեքստում<sup>7</sup>:

Միաժամանակ, ՄԻԵԴ-ը քննարկման առարկա է դարձրել պետությունների՝ սահմանահատման կարգի մասին իրազեկման և դրա իրականացման օբյեկտիվ հնարավորության ստեղծման պարտավորությունների կատարումը<sup>8</sup>:

Բացի այդ, ՄԻԵԴ-ը «Ռախիմովն ընդդեմ Ռուսաստանի» գործով արձանագրել է, որ անձի կողմից այլ պետության տարածք ժամանելիս ապաստանի հայցով անմիջապես չդիմելը էական է նրա պնդումների արժանահավատությունը գնահատելիս<sup>9</sup>:

Նշված հանգամանքների հաշվառմամբ 2021թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 469-րդ հոդվածի խրախուսական նորմը առավել հստակեցված է՝ նախատեսելով, որ հողվածով նախատեսված դրույթը չի տարածվում, այդ թվում, ապաստան հայցողի վրա, որը, **ուղղակիորեն գալով** այն տարածքից, որտեղ նրա կյանքը կամ ազատությունը **վտանգված է** եղել, **առանց ձգձգման** դիմում է իրավասու մարմին և մատնանշում իր ապօրինի մուտքի **հիմնավոր պատճառը**:

Այսպիսով, տվյալ խմբագրությամբ նորմն առավել հստակեցրել և կարգավորել է դրա կիրառման շրջանակը՝ նախատեսելով խրախուսական դրույթի կիրառման մի քանի պայմանների միառժամանակյա առկայություն՝

- անձը պետք է ՀՀ **ուղղակիորեն** գա այն տարածքից, որտեղ նրա կյանքը կամ ազատությունը վտանգված է եղել (այսպիսով, մեծամասամբ բացառվում է տարանցիկ երկրներում առանց հիմնավոր պատճառի ապաստան չհայցելու և ՀՀ սահմանն ապօրինի հատելուց հետո այդ գործիքակազմի կիրառումը, եթե նախորդ երկրում միջազգային պաշտպանություն հայցելու համապատասխան գործիքակազմը օբյեկտիվ կիրառելի է եղել),
- մեկնման երկրում անձի կյանքը կամ առողջությունը պետք է լինեն **վտանգված,**

<sup>7</sup> F.G. v. Sweden, §117. <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-161829%22%5D%7D>; (մուտք 27.08.2023թ.):

<sup>8</sup> Shahzad v. Hungary, §59. <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-210853%22%5D%7D>; (մուտք 27.08.2023թ.), M.H. and Others v. Croatia, §294. <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-213213%22%5D%7D>; (մուտք 27.08.2023թ.), A.A. and Others v. North Macedonia, §112-123. <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-216861%22%5D%7D>; (մուտք 27.08.2023թ.):

<sup>9</sup> Rakhimov v. Russia, § 91. <https://hudoc.echr.coe.int/?i=001-145366> (մուտք 28.08.2023թ.):

- անձը պետք է դիմի իրավասու մարմնին ապաստանի խնդրանքով **առանց ձգձգման,**

- անձի ապօրինի մուտքը ՀՀ պետք է **հիմնավորվի** վերջինիս կողմից:

Նման կարգավորումը միանշանակ արդարացված է և բխում է նաև ՄԱԿ ՓԳՀ մոտեցումներից<sup>10</sup>:

Մասնավորապես, ըստ ՄԱԿ ՓԳՀ-ի մեկնաբանման՝ «ուղղակիորեն գալ» արտահայտությունը ներառում է մարդու վիճակը, ով մուտք է գործում այն երկիր, որտեղ ապաստան է հայցվում ուղղակիորեն իր ծագման երկրից կամ մեկ այլ երկրից, որտեղ նրա պաշտպանությունը և անվտանգությունը չեն կարող երաշխավորվել: «Ուղղակիորեն» տերմինը չպետք է մեկնաբանվի բառացի՝ ժամանակային կամ աշխարհագրական իմաստով, քանի որ դեպք պետք է ինքնուրույն գնահատվի՝ հաշվի առնելով կոնկրետ առկա փաստական տվյալները և ապացույցները: Երբ գնահատվում է, թե արդյոք տարանցումը մեկ այլ երկրում կամ նախկինում մնալը համահունչ է «ուղիղ գալ» հասկացության հետ, հաշվի առնվող համապատասխան գործոնները ներառում են ուշացման պատճառները, օրինակ՝ միջոցներ ձեռք բերելը՝ ճանապարհը շարունակելու համար, փախստականի մտադրությունը՝ օրինակ՝ ընտանիքի հետ վերամիավորվելու ցանկությունը: Այնուամենայնիվ, այդ իրավիճակը չի չի ներառում այդ դեպքերը, երբ ապաստան հայցողը այլ երկրում ժամանակավորապես կամ մշտապես պաշտպանություն է գտել կամ բնակություն է հաստատել:

Անդրադառնալով ապաստան հայցողի կողմից անհապաղ ներկայանալու պահանջին՝ ՄԱԿ ՓԳՀ-ն ընդգծել է, որ «առանց ձգձգումների» տերմինը չպետք է մեկնաբանվի որպես խիստ ժամանակային պահանջ, և այդ փաստի հաստատումը կամ հերքումը կախված է կոնկրետ գործի հանգամանքներից՝ ներառյալ ապաստան հայցողի ժամանման ժամանակը և եղանակը, պայմանները, տեղեկատվության առկայությունը այն լեզվով, որին անձը տիրապետում է: Ըստ ՄԱԿ ՓԳՀ մոտեցման՝ անգամ այն դեպքերում, երբ անձը ձերբակալվել կամ կալանավորվել է՝ պետության տարածք ապօրինի մուտք գործելու հանգամանքով պայմանավորված, վերջինս, նախքան ապաստանի հայց ներկայացնելու ողջամիտ հնարավորության առկայությունը, գտնվում է Կոնվենցիայի 31-րդ հոդվածի պաշտպանության ներքո, քանի դեռ առկա չեն անձի կողմից «անբարեխիղճ վարքագծի» մասին վկայող տվյալներ:

Ընդ որում, 2021թ. ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված խրախուսական նորմը համանման է նաև այլ երկրների կողմից ամրագրված սկզբունքային մոտեցումներին:

Այսպես, Վրաստանի քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածի «Ծանոթագրու-

<sup>10</sup> Submission by the Office of the United Nations High Commissioner for Refugees in the Case of Alizada v. Armenia (application no. 2439/18) before the European Court of Human Rights, p. 5, point 3.1.4-3.1.9 <https://www.refworld.org/docid/5bd313884.html> (մուտք 28.08.2023թ.):

թյան» համաձայն՝ համապատասխան հողվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից ազատվում են օտարերկրյա քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր Վրաստան են ժամանել ուղղակիորեն այն տարածքներից, որտեղ նրանց կյանքին կամ ազատությանը վտանգ է սպառնում ՄԱԿ-ի 1951 թվականի փախստականների մասին կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն, որոնք Վրաստանում են գտնվում առանց թույլտվության, և նույն Կոնվենցիայի և Վրաստանի օրենսդրության համաձայն՝ ապաստան են հայցել Վրաստանի իշխանություններից՝ պայմանով, որ նրանք անմիջապես ներկայանան իշխանություններին և պատշաճ բացատրություններ տան Վրաստան ապօրինի մուտքի կամ գտնվելու վերաբերյալ, եթե նրանց գործողություններում այլ հանցագործության հատկանիշներ առկա չեն, ինչպես նաև եթե նման արարք է կատարել թրաֆիքինգի (թրաֆիքինգի) զոհը մինչև զոհի կարգավիճակ ստանալը<sup>11</sup>:

Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքով (հոդված 371) և սահմանափակված է համանման մոտեցում, համաձայն որի՝ հողվածով նախատեսված քրեական պատասխանատվությունը չի տարածվում Բելառուսի Հանրապետություն ժամանման դեպքերի վրա՝ Բելառուսի Հանրապետության պետական սահմանը հատելու կանոնների խախտմամբ փախստականի կարգավիճակ, լրացուցիչ պաշտպանության կամ Բելառուսի Հանրապետությունում ապաստան ստանալու համար դիմող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ պայմանով, որ նրանք անմիջապես դիմեն նման միջնորդությամբ<sup>12</sup>:

Այդպիսով, ընդհանուր առմամբ միջազգային հանրությունն առաջնորդվում է այն մոտեցմամբ, որ պետության սահմանն ապօրինի հատելիս ապաստան հայցելու գործիքակազմերի կիրառումը պետք է լինի հստակ և ապահովված լինի որոշակի չափորոշիչներով և նախադրյալներով, ինչը կբացառի միջազգային մարդասիրական քայլի չարաշահման հնարավորությունները:

Այս և օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող և ՀՀ-ում միջազգային պաշտպանություն հայցելու մեխանիզմը գործարկող անձանց իրավունքների ապահովման և կատարված օրենսդրական բարեփոխումների մասին կխոսվի ստորև՝ սույն հետազոտության Բաժին 2-ում:

## **Գլուխ 2. Օտարերկրյա պետության կողմից հետախուզվող անձանց նկատմամբ իրականացվող ընթացակարգերը.**

Գլոբալիզացման պայմաններում միջազգային հանրության առաջ ծագող մարտահրավերների համատեքստում առավել խնդրահարույց են դառնում քրեական գործերով իրավական օգնության բնագավառում գործնականում ծագող մի շարք խնդիրներ՝ կապված տարբեր պետությունների օրենսդրական կարգավորումների հետ:

<sup>11</sup> <https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=253> (մուտք 28.08.2023թ.):

<sup>12</sup> <https://pravo.by/document/?guid=3871&p0=hk9900275> (մուտք 28.08.2023թ.):



Այնուամենայնիվ, դա նպաստել է նաև միջազգային հանրության ջանքերի միավորմանը հանցավորության դեմ պայքարում միասնական մոտեցումներ և չափանիշներ մշակելու ու արդյունավետ քրեական արդարադատություն իրականացնելու նպատակով:

Այդ նպատակների իրագործման մեխանիզմներից մեկը կոնկրետ հարցերին առնչվող միջազգային պայմանագրերի կնքումն է:

Քրեական արդարադատության ոլորտում միջազգային համագործակցության առանձին ինստիտուտ է հանդիսանում անձին քրեական հետապնդման ենթարկելու կամ պատժի կրման նպատակով մի պետության կողմից մյուսին հանձնելը:

Նշված պարտավորությունն ամրագրված է ինչպես ՀՀ մասնակցությամբ գործող մի շարք բազմակողմ և երկկողմ պայմանագրերով, այնպես էլ ՀՀ ներպետական օրենսդրությամբ:

Ինչպես վերը նշվել է, ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով նախատեսված է անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակման հիմք՝ պայմանավորված անձի հանձնման հանգամանքով:

Բացի այդ, այս կառուցակարգն իր արտացոլումն է գտել նաև ՄԻԵԿ 5-րդ հոդվածով նախատեսված՝ անձի ազատության սահմանափակման հիմքերում:

01.07.1998թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված է հանցագործություն կատարած անձի հանձնումը այդ պայմանագրի մասնակից համարվող օտարերկրյա պետությանը, և եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ապա Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող անձի նկատմամբ՝

1) հանձնման թույլտվության կամ հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումներն ընդունում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը, եթե գործը գտնվում է մինչդատական վարույթում,

2) հանձնումը մերժելու վերաբերյալ որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, եթե գործը գտնվում է դատական վարույթի ընթացքում, ինչպես նաև այն դեպքում, երբ տվյալ անձի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ,

3) հանձնման թույլտվության վերաբերյալ որոշումը ընդունում է համապատասխանաբար գործը քննող կամ դատավճիռը կայացրած դատարանը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի միջնորդությամբ այն դեպքում, երբ գործը գտնվում է դատական վարույթի ընթացքում, կամ տվյալ անձի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

Այսպիսով, ի կատարումն ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների, ՀՀ դատախազությունը՝ ի դեմս ՀՀ գլխավոր դատախազի, ի կատար է ածում միջազգային պայմանագրերով և ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված այս կառուցակարգը, որի կապակցությամբ 2017 թվականից ի վեր

կատարվել են որոշակի ուսումնասիրություններ, որոնք առավելապես վերաբերել են ՀՀ-ում հայտնաբերված և օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող անձանց կողմից ՀՀ-ում միջազգային պաշտպանություն հայցելու ընթացակարգերին և այդ կապակցությամբ ի հայտ եկած խնդիրներին:

2017 թվականից ձևավորված գործնական իրավիճակի վերլուծությունը ցույց տվեց, որ բազմաթիվ դեպքեր են արձանագրվել, երբ օտարերկրյա պետությունների կողմից հետախուզման մեջ գտնվող անձինք ՀՀ տարածքում ձերբակալվելուց և կալանավորվելուց հետո չվերադարձելիության սկզբունքի ուժով փաստացի «հանձնման անձեռնմխելիություն» ձեռք բերելու նպատակով դիմում էին փախստականի կարգավիճակ ձեռք բերելու կամ ապաստանի հայցով:

ՀՀ ներպետական օրենսդրության վերլուծության և վերաբերելի միջազգային համաձայնագրերի հետ համադրման արդյունքում պարզվել է, որ այդ ժամանակահատվածում ՀՀ օրենսդրությամբ ուղղակիորեն ամրագրված չէին անձի կողմից փախստականի կարգավիճակ կամ ապաստանի հայցով դիմելու ժամկետներ, սակայն տվյալ խնդիրը բազմիցս քննադատության է արժանացել տարբեր մարմինների կողմից և ընդգծվել տվյալ ոլորտում իրավունքի չարաշահման հնարավորության բացառման անհրաժեշտությունը:

Նման պայմաններում երբեմն իրավապահ մարմիններն անձի հանձնումը թույլատրելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշման առկայության պայմաններում փաստացի զրկված էին լինում անձի հանձնումն իրականացնելու հնարավորությունից՝ հաշվի առնելով միջազգային և ներպետական օրենսդրությամբ նախատեսված արգելքները:

Նմանօրինակ իրավիճակներում անձը գտնվում էր կալանքի տակ (որի առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 8 ամիսը) և հետախուզումը նախաձեռնող պետությանը հանձնվելուց խուսափելու կամ այդ գործընթացը հետաձգելու նպատակով դիմում էր վերը նշված իրավական մեխանիզմներին՝ պատճառաբանելով, որ իր վերոգրյալ իրավունքը նախկինում իրեն պարզաբանված չի եղել: Նման իրավիճակներում անձի փաստացի հանձնումը հետաձգվում էր մինչև իր հայցի վերաբերյալ վերջնական որոշման, այդ թվում՝ դատական ասյանների բողոքարկման արդյունքում ընդունված դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ավելին, Օրենքում չկար որևէ դրույթ, որն անձին կարգելի նույն հիմքով կրկին դիմում ներկայացնել լիազոր մարմնին: Մինչդեռ ՀՀ քրեադատավարական օրենքով նախատեսված առավելագույն ժամկետի ավարտից հետո հանձնման նպատակով կալանավորված անձը ենթակա էր անհապաղ ազատ արձակման, ինչը կարող էր հետագա բարդությունների, այդ թվում՝ հանձնման անհնարիության հանգեցնել՝ վերջինիս ՀՀ-ում փախստականի կարգավիճակ կամ ապաստան շնորհելու հայցը մերժելու դեպքում:

Անդրադառնալով հիշյալ որոտում ամկա մյուս խնդրին՝ փախստականի կարգավիճակ հայցելու կամ ապաստան հայցելու վերաբերյալ դիմումների կապակցությամբ իրականացվող վարչական վարույթների քննարկման ժամկետներին, հատկանշական էր, որ Օրենքի (մինչև 2021թ. բարեփոխումները) 45-րդ հոդվածի համաձայն՝ ապաստան ստանալու մասին դիմումը լիազոր մարմինը քննարկում է դիմումը լիազոր մարմնում գրանցվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված արագացված ընթացակարգերի կիրառման դեպքի: Լիազոր մարմնի պատճառաբանված որոշմամբ դիմումի քննարկման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև երեք ամիս ժամանակով, եթե ամկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված վարչական վարույթի ժամկետի երկարաձգման հիմքեր:

Օրենքի (մինչև 2021թ. բարեփոխումները) 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ապաստան հայցողները և փախստականներն իրավունք ունեն դատական կարգով բողոքարկելու ապաստանի հայցի կամ փախստականի ճանաչման առնչությամբ հարուցված ապաստանի ընթացակարգի, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված վարչական այլ ընթացակարգերի հետևանքով լիազոր մարմնի կայացրած ցանկացած բացասական որոշում՝ դրա մասին տեղեկանալու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառները) վերանալուց հետո ապաստան հայցողը 15 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ապաստանի հայցի առնչությամբ լիազոր մարմնի կայացրած որոշման ընդունման մասին տեղեկանալու օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում, կարող է բողոք ներկայացնել դատարան:

Մինչև 2021թ. բարեփոխումները << վարչական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածն իր հերթին ամրագրել էր դրույթ այն մասին, որ գործը դատաքննության նախապատրաստելը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեին ողջամիտ ժամկետներում՝ առանց հստակ չափորոշիչներ և ընթացակարգեր սահմանելու:

Նման պայմաններում ստեղծվում էր իրավիճակ, երբ անձի հանձնումը թույլատրելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշման առկայության պայմաններում անազատության մեջ գտնվող անձի կալանավորումը շարունակաբար երկարացվում է և նա փաստացի չի հանձնվում օտարերկրյա պետությանը՝ դատական ատյաններում իր բողոքի վերաբերյալ քննությանը նրա մասնակցությունն ապահովելու նպատակից ելնելով:

Նույն խնդիրն ամկա է նաև ստորադաս դատական ատյանի որոշման դեմ վերադաս դատարան բողոք ներկայացնելու և այն դատարանի կողմից քննարկելու գործընթացներում:

<Նետևաբար, անհրաժեշտություն կար հստակեցնելու անազատության մեջ

գտնվող անձի կողմից փախստականի կարգավիճակ կամ ապաստան հայցելու դիմումների քննարկման և դրանց կապակցությամբ ընդունված որոշումների բողոքարկման ընթացակարգերը՝ սահմանելով հստակ և կանխատեսելի ժամկետներ:

Գործնականում ծագող հաջորդ խնդիրը պայմանավորված է եղել ապաստան հայցողների կողմից ապաստանի հայց ներկայացնելու իրավունքի չարաշահման և կրկնակի հայցերի դեպքում հստակ ընթացակարգի բացակայությամբ: Մասնավորապես, թեև «կրկնակի» բառը ենթադրում է «երկրորդ անգամ», սակայն այն իրավակիրառ պրակտիկայում ընկալվում էր որպես բազմակի անգամ ապաստանի հայց ներկայացնելու հնարավորություն և չարաշահվում էր ապաստան հայցողների կողմից: Միաժամանակ, թեև օրենքում ամրագրված էր, թե լիազոր մարմինը ի դեմս ՀՀ միգրացիոն ծառայության (ներկայումս՝ ՀՀ ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիության ծառայության), ինչ հիմքերի դեպքում էր քննության առնում կրկնակի հայցը, սակայն չէր նախատեսված, թե այդ հիմքերի բացակայության դեպքում ինչպիսի որոշում պետք է կայացնել լիազոր մարմինը:

Վերը նշված խնդիրների որոշակի հանգուցալուծման նպատակով նախաձեռնվեց օրենսդրական լայնածավալ բարեփոխումների ընթացակարգ:

Արդյունքում նախապատրաստվել և 2021 թվականի մայիսի 5-ին երկրորդ ընթերցմամբ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որով նախատեսված կարգավորումները և բարեփոխումները կներկայացվեն ստորև՝ սույն Հետազոտության Բաժին 2-ում:

**Բաժին 2. 2021 թվականի օրենսդրական բարեփոխումները:**

Հարկ է նկատել, որ վերը թվարկված խնդրահարույց հարցերը գտնվել են ինչպես ՀՀ ներպետական, այնպես էլ մի շարք միջազգային կառույցների ուշադրության ներքո:

Այսպես, միջազգային պաշտպանության շնորհման և դադարեցման գործընթացի նվազագույն ստանդարտների վերաբերյալ Եվրոպայի Խորհրդի 2013/32/EU 26.06.2013թ. հրահանգի<sup>13</sup> 28-րդ հոդվածի 1-րդ մասի «b» կետը, սահմանելով հայցի ուսումնասիրման ընթացակարգերը, ամրագրել է, որ պետությունն իրավասու է դադարեցնել անձի դիմումի ուսումնասիրությունը, եթե ողջամիտ հիմքեր կան համարելու, որ դիմումատուն անուղղակիորեն հետ է կանչել կամ հրաժարվել է իր դիմումից:

Այսպիսի հիմքերի թվին են դասվել այն դեպքերը, երբ դիմումատուն չի պա-

<sup>13</sup> <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32013L0032#d1e833-60-1> (մուտք 26.08.2023թ.):

տապիսանել իր դիմումի համար էական տեղեկատվություն տրամադրելու հարցումներին կամ չի ներկայացել անձնական հարցազրույցի, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմորդը ողջամիտ ժամկետում ցույց չի տալիս, որ իր ձախողումը պայմանավորված է իր կամքից անկախ հանգամանքներով, կամ վերջինս փախել կամ առանց թույլտվության լքել է այն վայրը, որտեղ նա ապրել կամ պահվել է՝ առանց ողջամիտ ժամկետում իրավասու մարմնի հետ կապ հաստատելու, կամ ողջամիտ ժամկետում չի կատարել ներկայանալու պարտականությունները կամ հաղորդակցվելու այլ պարտավորությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումատուն չի հիմնավորում, որ դա պայմանավորված է իր կամքից անկախ հանգամանքներով:

Նշված հրահանգի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «a» կետով ևս ամրագրված է դիմումատուի՝ առանձ ձգձգման, առաջին իսկ հնարավորության դեպքում պետության իրավասու մարմին ներկայանալու պարտավորությունը:

Սակայն այս պարտավորությունն անքակտելիորեն փոխկապակցված է նույն հրահանգի 12-րդ հոդվածի 1-ին մասի «a» կետով սահմանված՝ ապաստանի հայցով դիմելու իրավունքը անձին «ժամանակին» պարզաբանելու պետության պարտականության հետ:

Ընդ որում, հատկանշական է նույն հրահանգի 9-րդ հոդվածով ամրագրված սկզբունքը: Այսպես, նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումատուին թույլատրվում է մնալ անդամ պետությունում՝ միջազգային պաշտպանություն հայցելու ընթացակարգի իրագործման նպատակով, քանի դեռ լիազոր մարմինը որոշում չի կայացրել:

Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ անդամ պետությունները կարող են բացառություն անել այն դեպքում, երբ (...) անձը պատշաճ կարգով փոխանցվելու կամ հանձնվելու է երրորդ երկրին կամ միջազգային քրեական դատարաններին կամ տրիբունալներին: Անդամ պետությունը կարող է դիմումատուին հանձնել երրորդ երկիր միայն այն դեպքում, երբ այդ երկրի իրավասու մարմինները համոզված են, որ հանձնման որոշումը չի հանգեցնի ուղղակի կամ անուղղակի վերադարձի (refoulement)՝ խախտելով այդ անդամ պետության միջազգային պարտավորությունները:

Այս առումով հետաքրքիր է նաև ՄԻԵԴ դիրքորոշումը՝ «Ջաբարին ընդդեմ Թուրքիայի» գործով: Նշված գործով դիմումատուի՝ քաղաքական ապաստան տրամադրելու մասին դիմումը մերժվել էր բացառապես այն ներկայացնելու 5-օրյա ժամկետը խախտված լինելու հիմքով: Ըստ ՄԻԵԴ-ի՝ ներպետական իշխանությունները տվյալ դեպքում հաշվի չեն առել այն հանգամանքները, որ անձն իր ծագման երկիր վերադառնալու իրական վախ է ունեցել, իսկ դիմում ներկայացնելու նման կարճ ժամկետ սահմանելը հակասում են ՄԻԵԿ 3-րդ հոդվածով ամրագրված մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին<sup>14</sup>:

<sup>14</sup> Jabari v. Turkey, § 40. <https://hudoc.echr.coe.int/fre?i=001-58900> (մոււք 27.08.2023թ.):

Այսինքն, ՄԻԵԴ-ն ամրագրել է կոնկրետ գործերով ներկայացված բոլոր հանգամանքները քննության առարկա դարձնելու և դիմումատուի փաստարկները համակցության մեջ գնահատելու մոտեցումները՝ պարտավորեցնելով անդամ-պետություններին քննության առարկա դարձնել ֆորմալ պահանջները չպահպանելու մերժմամբ պայմանավորված՝ ՄԻԵԿ 3-րդ հոդվածով արգելված վերաբերմունքին արժանանալու մասին դիմումատուների պնդումները:

Բացի այդ, Կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված են այն հիմքերը, որոնց առկայությունը բացառում է անձին փախստականի կարգավիճակի տրամադրումը:

Մասնավորապես, Կոնվենցիայի 1-ին հոդվածով ամրագրված է, որ՝  
(...)

Մաս «դ»՝ Կոնվենցիան չի կիրառվում այն անձանց նկատմամբ, ովքեր պաշտպանություն կամ օգնություն են ստանում Միավորված ազգերի կազմակերպության մարմիններից կամ հաստատություններից, բացի Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարից:

Մաս «ե»՝ Կոնվենցիայի դրույթները չեն կիրառվում այն անձի նկատմամբ, որն այն երկրի իրավասու մարմինների կողմից, որտեղ նա ունեցել է բնակության վայր, ճանաչվել է այդ երկրի քաղաքացիությունն ունենալու հետ կապված իրավունքներ ու պարտականություններ ունեցող:

Մաս «զ»՝ Կոնվենցիայի դրույթները չեն կիրառվում այն անձի նկատմամբ, որի վերաբերյալ լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նա.

(ա) կատարել է հանցագործություն ընդդեմ խաղաղության, պատերազմական հանցագործություն կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություն, ինչպես դրանք սահմանված են նման հանցագործությունների կապակցությամբ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով ստեղծված միջազգային փաստաթղթերում,

(բ) կատարել է ոչ քաղաքական բնույթի ծանր հանցագործություն սպաստան տված երկրից դուրս՝ նախքան որպես փախստական այդ երկիր ընդունվելը,

(գ) մեղավոր է ճանաչվել Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին ու սկզբունքներին հակասող արարքներ կատարելու մեջ:

Այս սկզբունքների և չափորոշիչների համադրման արդյունքում նախաձեռնված օրենսդրական բարեփոխումները էականորեն հստակեցրել են միջազգային պաշտպանություն՝ փախստական կարգավիճակ և սպաստան հայցելու ընթացակարգային երաշխիքները և գործընթացները՝ փորձ կատարելով դրանք հնարավորինս հավասարակշռել ՀՀ-ի կողմից ստանձնած պարտավորություններն ինչպես միջազգային պաշտպանություն տրամադրելու, այնպես էլ հետախուզվող անձանց նկատմամբ հանձնման գործընթացներն իրականացնելու ոլորտներում:

Արդյունքում, ոլորտին առնչվող իրավական ակտերում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝

1. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններ և լրացումներ.

ա) Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասում կատարված փոփոխություն. ընդհանուր առմամբ նախատեսված է, որ ապաստան ստանալու մասին դիմումը լիազոր մարմինը քննարկում է դիմումը լիազոր մարմնում գրանցվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված արագացված ընթացակարգերի կիրառման դեպքի: Լիազոր մարմնի պատճառաբանված որոշմամբ դիմումի քննարկման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև երեք ամիս ժամանակով, եթե առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված վարչական վարույթի ժամկետի երկարաձգման հիմքեր:

Կատարված լրացմամբ տվյալ դրույթը կիրառելի չէ այն օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի, որն ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, կամ որի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ որը ենթակա է հանձնման օտարերկրյա պետությանը:

Այսպիսով, նախատեսվել է լիազոր մարմնի՝ օպերատիվ և արդյունավետ գործելու երաշխիք՝ հաշվի առնելով նշված խումբ անձանց առավել խոցելի վիճակը, այդ թվում՝ այն հանգամանքը, որ մեծամասամբ նրանց անձնական ազատության իրավունքը սահմանափակված է լինում:

բ) Օրենքի 47-րդ հոդվածը լրացվել է նոր՝ 2.1 մասով, համաձայն որի՝ այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որն ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, կամ որի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ որը ենթակա է հանձնման օտարերկրյա պետությանը, կարող է դիմել ապաստան ստանալու կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար այդ իրավունքի մասին ծանուցման պահից՝ 15 օրվա ընթացքում:

Իրավասու մարմնի պաշտոնատար անձը սույն մասում նշված անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, նրան ազատությունից զրկելու կամ նրա ազատությունը այլ կերպ սահմանափակելու պահից սկսած՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, պարզաբանում է ապաստան կամ փախստականի կարգավիճակ հայցելու նրա իրավունքը, որի վերաբերյալ նրան տալիս է գրավոր ծանուցագիր և ապահովում է նրա իրավունքի իրացումը՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին նրա դիմումն ուղարկելով լիազոր մարմին:

Այսպիսով, օրենսդիրը լուծել է մի շարք արդի մարտահրավերներ՝ միաժամանակ սահմանելով սկզբունքային մի քանի նախադրյալներ, այդ թվում՝

- նշված խումբ անձինք իրավունք ունեն ծանուցվեն այդ կառուցակարգին դիմելու իրենց իրավունքի մասին (տեղեկացված լինելու մասին իրավունք),

- նշված իրավունքը պարտավոր է պարզաբանել կոնկրետ իրավասու մարմնի պաշտոնատար անձը (սուբյեկտայնության պահանջ),
- ծանուցումը պետք է լինի գրավոր՝ ապահովվելով պաշտոնատար անձի կողմից իրավունքի իրացումը՝ դիմումը լիազոր մարմնին ուղարկելու միջոցով (հետևողականության պահանջ),
- ծանուցումը սուբյեկտի կողմից պետք է ներկայացվի 24 ժամվա ընթացքում (ժամանակային հստակության պահանջ),
- նշված անձինք կարող են դիմել միջազգային պաշտպանություն ստանալու խնդրանքով՝ ծանուցման պահից՝ 15 օրվա ընթացքում (իրավունքի իրացման ողջամիտ ժամկետ և կոնկրետ ընթացակարգ):

Բացի այդ, հաշվի առնելով մի շարք հիմնարար միջազգային փաստաթղթերով, այդ թվում՝ ՄԻԵԿ 6-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունների ապահովման անհրաժեշտությունը, ապահովվել են նաև ապաստան հայցող անձանց համար ընթացակարգային երաշխիքներ:

Այսպես, «M.S.S. ընդդեմ Բելգիայի և Հունաստանի»<sup>15</sup> գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ «(...) ապաստանի ընթացակարգին բնորոշ են լուրջ կառուցվածքային թերություններ, որոնց արդյունքում հավանականությունը, որ ապաստան հայցողների դիմումները և Կոնվենցիայի հիմքերով գանգատները լրջորեն կքննվեն Հունաստանի իշխանությունների կողմից, չնչին են: Նրանք նաև նշում էին, որ արդյունավետ իրավական պաշտպանության բացակայության պայմաններում, ապաստան հայցողները վերջին հաշվով պաշտպանված չեն իրենց քաղաքացիության երկրներ կամայական ձևով վերադարձվելուց: Դատարանը առաջին հերթին ուշադրությունը կենտրոնացնում է ապաստանի ընթացակարգի հասանելիության և ապաստանի հայցերի քննության հարցերում գոյություն ունեցող խնդիրների վրա, որոնց թվին են դասվում պարտադիր ընթացակարգի վերաբերյալ ապաստան հայցողներին տրամադրվող անբավարար տեղեկատվությունը, Ատիկայի ոստիկանության բաժանմունք մուտք գործելու հետ կապված բարդությունները, իշխանությունների և ապաստան հայցողների միջև կապի պահպանման ապահով համակարգի բացակայությունը, թարգմանիչների պակասը և անհատական հարցազրույցների անցկացման համար պատասխանատու անձանց մոտ համապատասխան գիտելիքների պակասը, ապաստան հայցողներին իրավական օգնություն տրամադրելու համակարգի բացակայությունը, որը գործնականում զրկում է նրանց անհրաժեշտ խորհրդատվություն ստանալու հնարավորությունից, և որոշումները տրամադրելու գործընթացի չափազանց մեծ ձգձգվածությունը:

(...)

<sup>15</sup> M.S.S. v. Belgium and Greece, § 300-302, 304. <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-103050> (մուտք 24.08.2023թ.):



Դատարանը նշում է, որ դիմումատուն պնդում էր, որ չի ստացել որևէ տեղեկատվություն այն ընթացակարգերի մասին, որոնց նա պետք է հետևեր:

(...)

Դատարանի կարծիքով պարտադիր ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվության անհասանելիությունը ակնհայտորեն մեծ խոչընդոտ էր այդ ընթացակարգերի գնահատման համար:»:

Ի կատարումն նշված պարտավորության՝ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 8-րդ մասում կատարված փոփոխության համաձայն՝ օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դեպքերում ներկայացված ապաստանի հայցերով լիազոր մարմնի կողմից կայացված որոշումը՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան ընդունմանը հաջորդող աշխատանքային օրը, ուղարկվում է ապաստան հայցողին՝ հայերեն և նրա համար հասկանալի լեզվով:

Այսպիսով, ամրագրվել է լիազոր մարմնի պարտավորությունը՝ ոչ միայն սեղմ ժամկետում ուղարկել ապաստան հայցողին կայացված որոշումը, այլև այն տրամադրել անձին՝ վերջինիս համար հասկանալի լեզվով:

Նախատեսվել են նաև այդ որոշման բողոքարկման առավել ողջամիտ ժամկետներ. Օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված հայցերով կայացված բացասական որոշումները կարող են բողոքարկվել դրանց մասին տեղեկանալու օրվանից սկսած՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Բացի այդ, բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառները) վերանալուց հետո ապաստան հայցողը ապաստանի հայցով կայացված բացասական որոշումը կարող է բողոքարկել բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառները) վերանալու օրվանից սկսած՝ 10 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ապաստանի հայցի առնչությամբ լիազոր մարմնի որոշման կայացման մասին իրազեկվելու օրվանից սկսած՝ մեկ ամսվա ընթացքում:

Բացի այդ, Օրենքով հստակեցվել է ապաստանի «կրկնակի» (երկրորդ) դիմում ներկայացնելու ընթացակարգը և բողոքարկումը:

Օրենքի փոփոխված խմբագրությամբ 59-րդ հոդվածի համաձայն՝ ապաստան տրամադրելու երկրորդ դիմումը կարող է ներկայացվել ապաստան տրամադրելու առաջին դիմումի վերաբերյալ վերջնական բացասական որոշման կամ ապաստան տրամադրելու գործընթացը կարճելու մասին որոշման առկայության դեպքում: Նման դեպքերում ապաստան հայցողն օգտվում է բոլոր այն իրավունքներից, որոնք նախատեսված են առաջին անգամ ապաստան հայցողների համար:

Լիազոր մարմինը երկրորդ դիմումն ստանալուց հետո հարցազրույց է անցկացնում դիմումատուի հետ և հայցի քննությունն իրականացնում է հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում.

1) առաջացել են հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի առնչությամբ կամ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պատճառներով նոր հանգամանքներ,

2) ապաստան հայցողը ներկայացրել է նոր ապացույցներ, որոնք հիմնավոր պատճառներով չեն ներկայացվել առաջին դիմումի քննության ընթացքում:

Նշված պայմանների բացակայության դեպքում լիազոր մարմինը կայացնում է դիմումն առանց քննության թողնելու մասին որոշում, որը Օրենքի 47-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դեպքերում կարող է բողոքարկվել ծանուցվելու օրվանից սկսած՝ 15 օրվա ընթացքում:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխություններ և լրացումներ.

Հարկ է նկատել, որ մինչև 2021 թվականների փոփոխությունները վերը նշված անձանց կողմից լիազոր մարմնի կողմից կայացված որոշումների բողոքարկման առանձնահատուկ ընթացակարգ նախատեսված չի եղել և համապատասխան բողոքները քննվել են ընդհանուր կարգով:

Մյուս մոտեցումը հանգեցրել է թե՛ ողջամիտ ժամկետում գործերի քննության ձգձգման<sup>16</sup>, թե՛ անձանց ՄԻԵԿ և վերաբերելի այլ միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքների իրացման խնդիրների, թե՛ ՀՀ-ի կողմից հանցավորության դեմ միջազգային համագործակցված համատեղ միջոցառումների, մասնավորապես՝ անձանց հանձնման գործընթացների ձգձգման և, առանձին դեպքերում, դրանց ի կատար ածման հնարավորությունների սպառման:

Այս խնդիրը լուծելու նպատակով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Հատուկ վարույթները» 5-րդ բաժնում նախատեսվել է առանձին 31.6 գլուխ՝ «Հայաստանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատած կամ Հայաստանի Հանրապետության տարածքում քրեական հետապնդման կամ օտարերկրյա պետությանը հանձնման ենթակա օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից փախստականի կարգավիճակ կամ ապաստան տրամադրելու հայցով իրավասու մարմինների կողմից կայացված անբարենպաստ վարչական ակտը վիճարկելու կամ բարենպաստ վարչական ակտ կայացնելու վերաբերյալ գործերը» վերտառությամբ:

Կատարված լրացումներով նախատեսվել է, որ ՀՀ վարչական դատարան կարող է դիմել ՀՀ պետական սահմանն ապօրինի հատած կամ ՀՀ տարածքում քրեական հետապնդման կամ օտարերկրյա պետությանը հանձնման ենթակա այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որը ապօրինի

<sup>16</sup> Տե՛ս, օրինակ, հետևյալ վարչական գործերով «Դատալեքս» տեղեկատվական համակարգում հասանելի տեղեկությունները՝ թիվ ՎԳ/0170/05/20 վարչական գործով դատական քննությունը տևել է առնվազն 2020 թվականի մարտից մինչև 2022 թվականի հունիս, թիվ ՎԳ/0705/05/20 վարչական գործով՝ 2020 թվականի հունիսից առնվազն մինչև 2022 թվականի դեկտեմբեր, թիվ ՎԳ/5185/05/18 վարչական գործով՝ 2018 թվականի հունիսից առնվազն մինչև 2021 թվականի մայիս:

Ավելին, թիվ ՎԳ-1/0088/05/21 վարչական գործով 2021 թվականի հունիս ամսից նախաձեռնված դատական վարույթով դատական նիստ է նշանակվել մասնավորապես, 2022 թվականի հուլիս ամսին, հաջորդ դատական նիստը՝ ավելի քան մեկ տարի անց՝ 2023 թվականի օգոստոս ամսին, հաջորդ նիստը՝ ևս մեկ տարի անց՝ 2024 թվականի հունիս ամսին:

նի հատել է ՀՀ պետական սահմանը, կամ որի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում ՀՀ տարածքում, կամ որը ենթակա է հանձնման օտարերկրյա պետությանը՝ ապաստանի հայցի կամ փախստականի կարգավիճակի ճանաչման վերաբերյալ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազոր մարմնի կայացրած անբարենպաստ վարչական ակտը վիճարկելու կամ բարենպաստ վարչական ակտ կայացնելու պահանջով:

Հստակեցվել է, որ նշված գործերով վարչական դատարան դիմում կարող է ներկայացվել վերը նշված օրենքով սահմանված լիազոր մարմնի կայացրած անբարենպաստ վարչական ակտի մասին իրազեկվելու օրվանից սկսած՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Օրենսդիրը նախատեսել է ինչպես պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան ներկայացնելու ժամկետը (դիմումը վարույթ ընդունելու մասին վարչական դատարանի որոշումն ստանալուց հետո՝ 10 օր), այլև սահմանել է վարչական դատարանի կողմից դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու օրվանից մեկամսյա ժամկետում գործը քննելու, գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու և հրապարակելու պարտականություն:

Նախատեսվել է նաև դատարական ակտի վերանայման հատուկ կառուցակարգ. վերը նշված դատական ակտը հրապարակման պահից 15-օրյա ժամկետում կարող է բողոքարկվել վերաքննության կարգով:

Վերաքննիչ դատարանը բողոքը քննում և համապատասխան որոշում է կայացնում ու հրապարակում վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու պահից մեկամսյա ժամկետում:

Ընդ որում, օրենսդիրն ամրագրել է, որ նշված գործերով վարչական դատարանի ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, կամ բավարարում է վերաքննիչ բողոքը՝ բեկանելով վարչական դատարանի դատական ակտը և կայացնելով նոր դատական ակտ:

Այսպիսով, օրենսդիրը չի նախատեսել բողոքարկվող դատական ակտը բեկանելու և նոր քննության ուղարկելու վերաքննիչ դատարանի լիազորություն՝ ամրագրելով, որ վերաքննիչ դատարանի կայացրած դատական ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Բացի այդ, նշված կառուցակարգերի գործնական կիրառումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 4-ի №1791-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումներից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» №818-Ն որոշման մեջ:

Արդյունքում, որոշման №1 հավելվածի 3-րդ կետով ուղղակիորեն ամրագրվել է, որ օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որն

ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, կամ որի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ որը ենթակա է հանձնման օտարերկրյա պետությանը, քրեական հետապնդում հարուցելու, ազատությունից զրկելու կամ նրա ազատությունն այլ կերպ սահմանափակելու պահից սկսած իրավունք ունի անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում **գրավոր ծանուցագրով** պարզաբանում ստանալու՝ ապաստան ստանալու կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու իրավունքի մասին, և այդ իրավունքի մասին ծանուցման պահից 15 օրվա ընթացքում ապաստան ստանալու կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար դիմում ներկայացնելու:

Միաժամանակ, նախատեսվել է ոստիկանության ծառայողի պարտականությունը՝ ապահովում նշված իրավունքի իրացումը՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին նրա դիմումն ուղարկելով լիազոր մարմին:

Բացի այդ, նույն որոշման №2 հավելվածի 6-րդ կետով ուղղակիորեն ամրագրված է գրավոր ծանուցումը անձին՝ անկախ վերջինիս կողմից ցանկություն հայտնելու նրան տրամադրելու պարտականությունը, ինչը էականորեն կարող է նվազեցնել հետազայում տարատեսակ վիճարկումները:

Այսպես, կբացառվեն ինչպես անձի կողմից վերը նշված իրավունքի իրացման սահմանափակ ժամկետների մասին անտեղյակության հանգամանքով պայմանավորված հետագա չարաշահումները և վիճարկումները, այնպես էլ պետական մարմինների աշխատակիցների (այդ թվում՝ անձի ձերբակալումն իրականացրած անձանց) կողմից վերը նշված՝ անձին գրավոր ծանուցում տրամադրելու պարտականությունը պատշաճ կատարելու հարցում թերանալը՝ անձի կողմից գրավոր ծանուցում ստանալու ցանկություն չհայտնելու հիմնավորմամբ:

Նշված օրենսդրական բարեփոխումները միտված են լուծելու և հավասարակշռելու պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները՝ մի կողմից՝ ապահովելով իրապես խոցելի և միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքները և երաշխիքները, մյուս կողմից՝ քրեական արդարադատության իրականացման և հանցավորության դեմ պայքարի հարցում միջազգային հանրության ջանքերի միավորման ոլորտներում:

Միաժամանակ, հարկ է նկատի ունենալ, որ վիճելի է նշված մոտեցումների կիրառումը քաղաքական ապաստանի ինստիտուտի նկատմամբ, որի պարագայում դեռևս անհրաժեշտ է կատարել որոշակի օրենսդրական բարեփոխումներ:

Հաշվի առնելով հարցերի լայնածավալությունը և առկա մարտահրավերները՝ գտնում ենք, որ կարգավորման ենթակա հարցերը հնարավոր չէ լուծել «տեղային» մոտեցմամբ, ինչի կապակցությամբ առավել ընդունելի է դիտվում միջազգային պաշտպանության մասին նոր օրենքի մշակումն և ընդունումը:

### Եզրակացություն

Միջազգային պաշտպանություն հայցելու և այն ստանալու մեխանիզմները եղել և շարունակում են մնալ կարևոր ու զգայուն մարտահրավեր առաջադեմ հասարակության համար: Այս ոլորտում գրքյալ առումով կատարված բարեփոխումները և զարգացումներն իրենց արտացոլումն են գտել նաև ՀՀ իրավակիրառ պրակտիկայում, որը վերլուծվել է սույն հետազոտության մեջ և հանգում է հետևյալ հիմնական փաստարկներին:

1. Միջազգային պաշտպանության իրավունքը երաշխավորված է մի շարք հիմնարար փաստաթղթերով և չի կարող սահմանափակվել զուտ ձևական, ոչ իրատեսական, կամայական պահանջների նախատեսմամբ (իրավունքի իրացման անիրատեսական ժամկետ, կոնկրետ վայր դիմելու կամ որոշակի ձևաչափով դիմելու պահանջ):
2. Տվյալ իրավունքի ապահովումը հանդիսանում է նաև ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորություն:
3. ՀՀ-ն, միանալով մի շարք պայմանագրերի և երկկողմ համաձայնագրեր կնքելով օտարերկրյա պետությունների հետ, ստանձնել է նաև անձանց հանձնելու մասին պարտավորություն<sup>17</sup>:
4. Պետության միջազգային պարտավորությունները պետք է բալանսավորվեն, սակայն հակասության դեպքում առավել ուշադրություն և նախապատվություն է տրվում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած պարտավորությունների լիարժեք կատարմանը՝ միտված չեզոքացնելու անձի նկատմամբ արգելված վերաբերմունքի ռիսկերը:
5. Այս առումով ՀՀ-ի կողմից ձեռնարկված օրենսդրական բարեփոխումների արդյունքում կատարվել են գործնական քայլեր՝ անձի իրավունքների ապահովման համատեքստում:
6. Գործող քրեական օրենսգրքով ՀՀ սահմանն ապօրինի հատելու համար քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական նորմը առավել հստակ է ամրագրվել և համահունչ է ինչպես այլ երկրների, այնպես էլ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից մշակված հիմնական չափորոշիչներին:
7. «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունները օրենսդրորեն ամրագրել են ինչպես անձի՝ ապաստանի հայցով դիմելու կոնկրետ կառուցակարգերը և երաշխիքները, այնպես էլ իրավասու մարմինների՝ որոշակի գործողություններ կատարելու ուղղակի պարտականություններ (անձին գրավոր պարզաբանել իր իրավունքը, ապահովել դիմումի ընթացքը, դիմումը քննարկել սեղմ ժամկետում և անձին տրա-

<sup>17</sup> Դրանցից մի քանիսը հրապարակված են ՀՀ արդարադատության նախարարության կայք էջում. [https://www.moj.am/legal/browse/international\\_treaties](https://www.moj.am/legal/browse/international_treaties) (մուտք 30.08.2023թ.):

մադրել որոշումը՝ իր համար հասկանալի լեզվով, գործի քննությունը դատարանում իրականացնել ողջամիտ ժամկետներում):

8. Մինչույն ժամանակ, ակնհայտ է, որ տվյալ ոլորտում խնդիրները հնարավոր չէ լուծել «տեղային» մոտեցմամբ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վերը նշված օրենքն ընդունվել է դեռևս 2008 թվականին, մինչդեռ ներկա գլոբալ, այդ թվում՝ իրավական գործընթացները շարունակաբար զարգանում են, ինչի կապակցությամբ առավել ընդունելի է դիտվում միջազգային պաշտպանության մասին նոր միասնական օրենքի մշակումն ու ընդունումը<sup>18</sup>:
9. Նախորդ կետի իրագործումը նաև կփարատի այն հարցը, թե արդյո՞ք կատարված օրենսդրական բարեփոխումները կիրառելի են քաղաքական ապաստան հայցելու ինստիտուտի նկատմամբ:

---

<sup>18</sup> Տե՛ս, օրինակ, «Միջազգային պաշտպանության մասին» Վրաստանի 01.12.2016թ. օրենքը. <https://matsne.gov.ge/ru/document/download/3452780/0/ru/pdf> (մուտք 30.08.2023թ.):

**Գրականանության ցանկ (reference list, список литературы)**

1. Իրավական ակտեր և նախադեպային որոշումներ
  - 1.1 Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 04.11.1950թ. կոնվենցիա:  
The Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, 04.11.1950.
  - 1.2. Փախստականների կարգավիճակի մասին 28.07.1951թ. կոնվենցիա  
The Refugee Convention, 28.07.1951:
  - 1.3. Փախստականների կարգավիճակի մասին 28.07.1951թ. կոնվենցիան լրացնող 31.01.1967թ. արձանագրություն:
  - 1.4. Protocol relating to the Status of Refugees, 31.01.1967.
  - 1.5. 05.07.1995թ. ընդունված ՀՀ Սահմանադրություն՝ 2005թ. փոփոխություններով՝ 06.12.2015թ. խմբագրությամբ:  
Constitution of the Republic of Armenia, 05.07.1995, with amendments of 2005, in the redaction of 06.12.2015.
  - 1.6. «Փախստականների և ապաստանի մասին» 27.11.2008 ՀՀ օրենք՝ 05.05.2021թ. փոփոխություններով:  
Law of the Republic of Armenia On the status of refugees and asylum, 27.11.2008, with amendments of 05.05.2021.
  - 1.7. ՀՀ վարչական դատավարության 05.12.2013թ. օրենսգիրք՝ 05.05.2021թ. փոփոխություններով:  
Administrative Procedure Code of the Republic of Armenia, 05.12.2013, with amendments of 05.05.2021.
  - 1.8. 18.04.2003թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգիրք: Criminal Code of the Republic of Armenia, 18.04.2003.
  - 1.9. 05.05.2021թ. ընդունված ՀՀ քրեական օրենսգիրք: Criminal Code of the Republic of Armenia, 05.05.2021.
  - 1.10. 01.07.1998թ. ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք  
Criminal Procedure Code of the Republic of Armenia, 01.07.1998.
  - 1.11. F.G. v. Sweden - ECHR.
  - 1.12. Shahzad v. Hungary - ECHR.
  - 1.13.M.H. and Others v. Croatia - ECHR.
  - 1.14.A.A. and Others v. North Macedonia - ECHR.
  - 1.15.Rakhimov v. Russia - ECHR.
  - 1.16.Jabari v. Turkey - ECHR.
  - 1.17.M.S.S. v. Belgium and Greece - ECHR.
  - 1.18. ՀՀ կառավարություն 04.11.2021թ. №1791-Ն որոշում՝ ՀՀ կառավարության 14.06.2007թ. №818-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին:

04.11.2021 Decision of the Government of the Republic of Armenia №1791-Ն on amending and supplementing 14.06.2007 Decision of the Republic of Armenia №818-N.

1.19. Եվրոպայի Խորհրդի 2013/32/EU 26.06.2013թ. հրահանգ:  
Directive 2013/32/EU of the European Parliament and of the Council of 26 June 2013.

22.07.1999թ. Վրաստանի քրեական օրենսգիրք (30.06.2023թ. փոփոխություններով):

Criminal Code of Georgia 22.07.1999 (with amendments of 30.06.2023).

1.20. 09.07.1999թ. Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգիրք (14.03.2023թ. փոփոխություններով):

Criminal code of the Republic of Belarus 09.07.1999 (with amendments of 14.03.2023).

## 2. Տեսական և այլ աղբյուրներ

2.1. Ալիզադան ընդդեմ Հայաստանի գործով ՄԱԿ ՓԳՀ զեկույցը Մարդու իրավունքների Եվրոպական դատարանին:

Submission by the Office of the United Nations High Commissioner for Refugees in the case of Alizada v. Armenia before the European Court of Human Rights.

2.2. ՄԱԿ տնտեսական և սոցիալական խորհրդի 03.10.1946թ. №E/236 հրահանգը:

UNO Economic and Social Council Directive №E/236, 03.10.1946.

2.3. ՄԱԿ ՓԳՀ 14.12.1950թ. կանոնադրությունը:

Statute of the Office of the United Nations High Commissioner for Refugees, 14.12.1950.

2.4. Թիվ ՎԴ/0170/05/20 վարչական գործ:

Administrative case ՎԴ/0170/05/20.

2.5. Թիվ ՎԴ/0705/05/20 վարչական գործ:

Administrative case ՎԴ/0705/05/20.

2.6. Թիվ ՎԴ/5185/05/18 վարչական գործ:

Administrative case ՎԴ/5185/05/18.

2.7. Թիվ ՎԴ1/0088/05/21 վարչական գործ:

Administrative case ՎԴ1/0088/05/21.



**Anna Hovhannisyán**

*Deputy Head of the Department of International Legal Cooperation  
of the Prosecutor General's Office of the Republic of Armenia*

## **SEVERAL ISSUES AND IMPLEMENTED REFORMS FOR SEEKING INTERNATIONAL PROTECTION IN THE REPUBLIC OF ARMENIA<sup>1</sup>**

### **Abstract**

The migration and integration processes carried out at the global level inevitably bring up certain problems in that field, in the solution of which the common approach of the states and the application of universal standards are important.

The Constitution of the Republic of Armenia and international treaties envisage the provision of international legal protection and the application of appropriate guarantees to those who need it.

However, the analysis of the practical situation has shown that in a number of cases, applying the right to seek international protection in the RA by persons, imprisoned in accordance with the law, is seen as a way to avoid certain restrictions imposed on them under the legislation.

The purpose of this article is to conduct research on implementation of the procedures for requesting international protection, the tools and mechanisms for guaranteeing the relevant rights, and the reforms implemented in the RA.

Based on the conducted analysis, the article presents the current situation before the relevant legislative reforms and the need for the implementation of these reforms, their essence and proposals regarding some of the existing problems.

**Keywords:** international protection; a refugee; asylum; extradition; international cooperation; illegal border crossing.

---

<sup>1</sup> The article was presented on 09.09.2023 and was reviewed on 30.11.2023.

**Анна Оганесян**

*Заместитель начальника управления международно-правового сотрудничества Генеральной прокуратуры Республики Армения*

## **НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРОЦЕДУРЫ ОБРАЩЕНИЯ ЗА МЕЖДУНАРОДНОЙ ЗАЩИТОЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И ПРОВЕДЕННЫЕ РЕФОРМЫ<sup>1</sup>**

### **Абстракт**

Миграционные и интеграционные процессы, происходящие на глобальном уровне, неизбежно выявляют некоторые имеющиеся в данной сфере проблемы, при решении которых важную роль играют единый подход государств и применение универсальных стандартов.

Конституцией Республики Армения и международными договорами предусмотрено предоставление международно-правовой защиты и соответствующих гарантий лицам, нуждающимся в международной защите. Однако изучение практики показало, что в ряде случаев реализация права на получение международной защиты в РА лицами, лишенными свободы в установленном законом порядке, рассматривается как способ избежать определенных установленных законом ограничений в отношении этих лиц.

Целью данного исследования является изучение порядка реализации процедур обращения за международной защитой, применения инструментов и механизмов обеспечения соответствующих прав, а также реформ, реализованных в РА.

На основе проведенного исследования в рамках статьи проанализирована ситуация, сложившаяся до принятия соответствующих законодательных реформ, их суть, обоснована необходимость проведения этих реформ, а также выдвинуты предложения по устранению некоторых существующих проблем.

**Ключевые слова:** международная защита; беженец; убежище; выдача; экстрадиция; международное сотрудничество; незаконное пересечение границы.

---

<sup>1</sup> Статья была представлена 09.09.2023 и прошла рецензирование 30.11.2023.